ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/65

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.11.2017թ. թիվ 03/26-3/21077-17 գրությամբ «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4077 գրության հիման վրա, 17.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Զիպեռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4077 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. նոյեմբերի 8-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 13.11.2017թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. <u>«Զիպեռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Զիպեռ» ՍՊԸ-ն 06.12.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Զիպեռ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանը չի ներկայացրել ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագրով՝ համապատասխան պայմանագրի ապահովումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10

աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Ընկերությունը ի լրումն 27.12.2017թ.Խորհրդին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութերի գնման նպատակով կազմակերպվել է ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5 ծածկագրով ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որով հայտերի բացումը տեղի է ունեցել 2017թ. մարտի 13-ին:

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5 ծածկագրով ընթացակարգի հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով գնման ժամանակացույցով, ի թիվս այլ ապրանքների, հետևյալ չափաբաժիններով ապրանքների մատակարարման համար նախատեսվել են հետևյալ ժամկետները.

- Չափաբաժին 59՝ պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ զինվորական նախշով) ապրանքի մատակարարում, համապատասխանաբար՝ մայիս և հունիս ամիսներին:
- Չափաբաժին 92՝ խողովակներ (մետաղական խողովակ Φ.88.5) ապրանքի մատակարարում, համապատասխանաբար՝ մայիս ամսում:
- Չափաբաժին 148՝ երկաթյա արտադրանք (մետաղյա անկյունակ) ապրանքի մատակարարում, համապատասխանաբար՝ մայիս և հուլիս ամիսներին:
- Չափաբաժին 150՝ երկաթյա արտադրանք (մետաղյա թիթեղ 1.5մմ) ապրանքի մատակարարում, համապատասխանաբար՝ մայիս ամսում:

Վերոնշյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Զիպեռ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստից հետո 13.03.2017թ. հինգ ամիս անց, այսինքն՝ 09.08.2017թ., ՀՀ պաշտպանության

նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագիր՝ 59, 92, 148 և 150 չափաբաժինների մասով:

Սակայն նկատի ունենալով, որ պայմանագիրը կնքվել է միայն 2017թ. օգոստոսին մինչդեռ տվյալ ընթացակագով մատակարարումները պետք է սկսվեին 2017թ. մայիս ամսից, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փոփոխություններ է կատարվել պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ում գնման ժամանակացույցում, և «Զիպեռ» ՍՊԸ-ի կնքված պայմանագրով նախատեսվել են մատակարարման միանգամայն այլ ժամկետներ, քան նախատեսված էին ընթացակարգի հրավերով: Մասնավորապես, կնքված պայմանագրով սահմանվել են մատակարարման հետևյալ նոր ժամկետները.

- Չափաբաժին 59՝ պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ զինվորական նախշով) ապրանքի մատակարարում 3-րդ եռամսյակում, համապատասխանաբար՝ հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին (հրավերով՝ մայիս և հունիս ամիսներին),
- Չափաբաժին 92՝ խողովակներ (մետաղական խողովակ Φ.88.5) ապրանքի մատակարարում 3-րդ եռամսյակում, համապատասխանաբար՝ հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին (հրավերով՝ մայիս ամսում),
- Չափաբաժին 148՝ երկաթյա արտադրանք (մետաղյա անկյունակ) ապրանքի մատակարարում 3-րդ եռամսյակում, համապատասխանաբար՝ հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին (հրավերով՝ մայիս և հուլիս ամիսներին):
- Չափաբաժին 150՝ երկաթյա արտադրանք (մետաղյա թիթեղ 1.5մմ) ապրանքի մատակարարում 3-րդ եռամսյակում, համապատասխանաբար՝ հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին (հրավերով՝ մայիս ամսում):

«Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի (2016թ. օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մաս) 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Իսկ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագրում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կատարվել են գնման առարկայի բնութագիր կազմող /տվյալ դեպքում ձեռքբերման պայման ի դեմս գնման ժամանակացույցի/ այնպիսի փոփոխություններ, որոնք «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անթույլատրելի են և նման փոփոխությամբ պայմանագիր կնքվել չէր կարող:

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան /հակասում է օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասին/, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, ուստի և ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագիրը օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր է: Միևնույն ժամանակ, քանի որ ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր է, ուստի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերոհիշյալ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, այդ թվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագրի միակողմանի լուծման հիմքով «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հետևանքի:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության շահերի ներկայացման կապակցությամբ ներգրավված՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի հիմնադիր Հասմիկ Ենգոյանը և նույն ընկերության տնօրեն Արթուր Պարանյանը:

4.<u>ՍՑ-ԷՍ-2017/65 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 17.11.2017թ. թիվ 03/26-3/21077-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4077 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Զիպեռ» ՍՊԸ-ին ուղղված 10.11.2017թ. թիվ ԴՎԱ/4028 գրությունը, «Զիպեռ» ՍՊԸ-ի կողմից 06.12.2017թ. և 27.12.2017թ. Խորհրդին ներկայացված գրությունները.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պատվիրատուն 10.11.2017թ. գրությամբ դիմել է «Զիպեռ» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-10/5-4 գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել «Պրոֆնաստիլ զինվորական նախշով»՝ 4,000 քմ, «Մետաղական խողովակ Φ.88.5»՝ 500 մետր, «Մետաղյա անկյունակ»՝ 5,000 մետր, «Մետաղյա թիթեղ 1.5մմ»՝ 250 քմ ապրանքատեսակներ՝ 21,264,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, սակայն 01.11.2017թ. դրությամբ չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետը, 3.1.7.1 կետերի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.11.2017թ. միակողմանի ամբողջությամբ լուծել է ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Զիպեռ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես Պայմանագրի 7.2 կետով նապատեսված տույժ փոխանցել 329,592 (երեք հարյուր քսանինը հազար հինգ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 14.12.2017թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագիր կնքելիս, Ընկերության կողմից պայմանագրի ապահովում չի ներկայացվել: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ 06.12.2017թ, գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագրի ապահովման պատճենը, սակայն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից որևէ պատասխան չի ստացվել:

Ընկերության ներկայացուցիչը խնդրեց Խորհրդին, որպիսի Խորհուրդը ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջի ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5 ծածկագրով ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի ապահովման պատճենը:

Խորհուրդը 18.12.2017թ. դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագրի ապահովման պատճենը:

Ի պատասխան Խորհրդի 18.12.2017թ. գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին տրամադրել է ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Զիպեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագրի ապահովման և վճարման պահանջագրի պատճենը:

28.12.2017թ. կայացած նիստի ժամանակ «Զիպեռ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ Ընկերությունը պայմանագրի կատարման ապահովմանը կից ներկայացրել է վճարման պահանջագիր, որտեղ պայմանագրի ծածկագիրը հատվածում սխալմամբ լրացված է եղել ոչ թե կնքվելիք պայմանագրի ծածկագիրը, այլ ընթացակարգի ծածկագիրը, որից հետո Պատվիրատուն պահանջել է, որպեսզի վերջինս շտկի առկա անհամապատասխանությունը, սակայն Ընկերության կողմից շտկված տարբերակը Պատվիրատուին չի ներկայացվել:

Ընկերության ներկայացուցիչը պնդեց նաև 27.12.2017թ. Խորհրդին ներկայացված դիրքորոշումը՝ հայտնելով հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Զիպեռ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, ուստի և ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագիրը օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր է: Միևնույն ժամանակ, քանի որ ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր է, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերոհիշյալ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, այդ թվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով շինանյութերի գնման պայմանագրի միակողմանի լուծման հիմքով «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հետևանքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովումը ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:
- 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Հրավերի՝

- 9.4 կետի համաձայն՝ նույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:
- 10.1 կետի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:
- Պայմանագրի նախագծի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, նախատեսված պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ զինվորական նախշով) ապրանքի մատակարարումը նախատեսվել է 2017թ. մայիս և հունիս ամիսներին, խողովակներ (մետաղական խողովակ Φ.88.5) ապրանքի մատակարարումը՝ 2017թ. մայիս ամսում, երկաթյա արտադրանք (մետաղյա անկյունակ) ապրանքի մատակարարումը՝ 2017թ. մայիս և հուլիս ամիսներին և երկաթյա արտադրանք (մետաղյա թիթեղ 1.5մմ) ապրանքի մատակարարումը՝ 2017թ. մայիս ամսում:

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով

նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):

- Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 2017թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարվի «Պրոֆնաստիլ զինվորական նախշով»՝ 4,000 քմ, «Մետաղական խողովակ Φ.88.5»՝ 500 մետր, «Մետաղյա անկյունակ»՝ 5,000 մետր և «Մետաղյա թիթեղ 1.5մմ»՝ 250 քմ ապրանքատեսակներ՝ 21,264,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Խորհուրդն ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Խորհրդին տրամադրված «Զիպեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագրի կատարման ապահովում հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի և դրան կից վճարման պահանջագրի պատճենները, արձանագրում է, որ դրանք համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության և Հրավերով սահմանված պահանջներին:

Խորհուրդը գտնում է, որ N ՇՀԱՊՁԲ-10/5-4 ծածկագրով պայմանագրի կատարման ապահովում հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի և դրան կից վճարման պահանջագրի՝ օրենսդրության պահանջներին անհամապատասխանության վերաբերյալ Ընկերության հայտնած դիրքորոշումն անհիմն է:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պայմանագրի գնման ժամանակացույցով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները փոփոխվել են և չեն համապատասխանում Հրավերի պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետներին:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ կնքվելիք պայմանագրում կատարելով նշված փոփոխությունները, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և Հրավերի 9.4 կետի պահանջները, քանի որ մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի, այդ թվում՝ գնման ժամանակացույցի փոփոխմանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.11.2017թ. «Զիպեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**